

գամ պիտի կարդաք՝ մի բան հասկանալու համար, բայց շատ անդամ ձեր փորձերը մնում են ապարդիւն եւ դուք ընկնում էք ենթադրութիւնների աշխարհը:

Մինչեւ այժմ բերած քաղուածքներից դուք արդէն տեսաք այդ ամէնը: Սակայն պատկերը աւելի լրացնելու համար բերենք երկու օրինակ եւս. —

1. «Արդ, ելցուք մեք եւ մտցուք ի հարկս սիրոյ եւ խաղաղութեան՝ ո՛չ ի կամաց մարմնոյ եւ ո՛չ ի կամաց առն իշխանաց կողմնակալութենէ, այլ ի կամս այնմ, որում բնական բնութիւնս մարդոյ խոստովանի արդարութիւն, եւ ըստ սովորութեան բոլոր աշխարհի եւ ամենայն խոհեմ, արանց, որում կամին խաղաղութիւն խօսել ի մէջ հակառակորդաց, նոյն գունակ թողուլ պարտիմք բարեգործութիւն եւ շարարարութիւն թագաւորաց եւ իշխանաց նախնեաց մերոց» եւն. (17):

2. «Նա՛ եւս հարկաւոր է իմ ասել բարեկամք ընթերցողաց իմոց եւ հաստատել ի մխտս ձեր, զի հաստատութիւն զամենայն զոր ինչ բանի ի յերեսս երկրի, որում կարէ կալ յաւիտեան, որ նոյն ինքն լինիցի իբր տեսարանի ահն ամենայն տեսողաց, եւ զի ո՛չ մնաց եւ ո՛չ կարէ ի վերայ հաստատութեան զամենայն զոր ինչ յերեսս երկրի ընդ հովանեաւ բնութեան մարդոյ ո՛չ կարգ, ո՛չ նախատիւք, ո՛չ կեանք եւ ո՛չ վախճան, եթէ չիցէ ընթացեալ ի ճանապարհաւ եւ կերպիւ եւ համեմատութեամբ բնական բնութեան մարդոյ ի զօրութենէ բանական հոգոյ ընտրողութենէ» եւն. (116):

Շահամիրեանը ինքն էլ գիտակցում է իր լեզուի եւ գրութեան ձեւի անկանոնութիւնները եւ դրա համար էլ իր գրուածքը նա կոչում է «ոամկօրէն շարադրութիւն»: Նրա ամբողջ յոյսը ընթերցողի ներողամտութեան վրայ է: «Եւ յոյս ունեմ, որ դուք ներողամիտ կը լինէք իմ այս ոամկօրէն շարադրութեան համար» — փնդում է նա ընթերցողներին. «Եւ չկարողացայ քաղցրախօսութեամբ ճառել յսողներէդ ահանջին եւ ինձ դարձրի բամբասանքների առարկայ, որովհետեւ ամէն մի համբալ կարող է ծաղրել իմ այս շարադրութիւնը» (112):

Գրքի այդ «ահամայ» թերութիւնները համար ձեղադրել Շահամիրեանին — անարդա-

րութիւն կը լինէր: ԺԸ. դարի մի հայ վաճառականից, այն էլ Հնդկաստանի նման մի երկրի անբարենպաստ պայմաններում ապրող — այս տեսակէտից՝ անբարենպաստ — հազիւ կարելի էր աւելին պահանջել: Սակայն բացի դրանից՝ կարելորը գրուածքի ձեւը չէ, կեղեւը, այլ բովանդակութիւնը, որ հեղինակը դրել է այդ անհրապոյր ձեւի մէջ:

Շահամիրեանը առաջին հայ հեղինակն է, գոնէ միջին դարից այս կողմը, որ — ինչպէս ասում է Լէօն — մէկ կողմ թողնելով հայոց գրականութեան մէջ մինչ այդ տիրող կրօնակեղեցական ուղղութիւնը, որդեգրեց մի նոր ուղղութիւն՝ ազգի իրական վիճակն ու նրան դարձանելու միջոցները: Ուրիշ խօսքով՝ նա առաջին քաղաքական հեղինակն է մեր մէջ — ահա՛ այն մեծ պատիւը, որ պատկանում է նրան:

Դրան զուգընթաց՝ նա առաջինը մեր մէջ իրաւացիօրէն ըմբռնեց, որ մի ազգի ազատութեան համար մինակ սուրը դեռ բաւական չի, այլ անհրաժեշտ է, որ սրին միացած լինի եւ գրիչը: Մինչ այդ Հայաստանում գոյութիւն էր ունեցել երկու շարժում — արեւմտեան կամ տաճկաց Հայաստանում՝ գրական շարժում, իսկ արեւելեան կամ պարսկական Հայաստանում՝ քաղաքական շարժում: Թէեւ երկուսն էլ ծնունդ առած միեւնոյն ժողովրդի ծոցում եւ միեւնոյն հողի վրայ, բայց եւ այնպէս նրանք միշտ էլ մնացին իրարից կտրուած, իրարից անտեղեակ: Մխիթար Սեբաստացին եւ Իսրայէլ Օրին իրար չճանաչեցին — իրաւամբ նկատում է Լէօն: Սուրը եւ գրիչը մնացին իրարից բաժան, թէպէտ երկուսն էլ հաւասարապէս հարկաւոր էին հայ ժողովրդի ազատագրութեան գործին: Թերեւս այդ պարագան էր, որ այնքան վճռական նշանակութիւն ունեցաւ հայ ժողովրդի ճակատագրի համար:

Դրական շարժումն արեւմտեան | Հայաստանում անտեղեակ էր այն սկզբունքներին, որ քարոզում էին արեւելեան Հայաստանում սրի եւ վառօղի միջոցով: Ուստի նա շարունակեց իր հին ուղղութիւնը, մնալով կրօնա-եկեղեցական նեղ սահմաններում եւ չհամապատասխանելով ազգի իրական պահանջներին, ժամանակի ոգուն եւ տրամադրութիւններին: Միւս կողմից էլ՝ քաղաքական շարժումը ա-